ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

1. ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ /ծածկագիր 3.3-1/.

- երկրորդ կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները, ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը,
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի իմացություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014թ. հոկտեմբերի 3-ին ժամը 12^{00}-ին Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի գյուղապետարանում:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փասթաթղթերը ներկայացնելիս/:
-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող փասթաղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի / բացակայության դեպքում համապատասխան մարմնից/ պատճենները բնօրինակի հետ միասին:
- արական սեռի դիմորդները զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող վկայական,
- երկու լուսանկար 3x4 չափսի,
- անձնագրի պատճեն, սոց. քարտ,
- ՀՀ կառավարության 2005թ. մարտի 3-ի N310 –Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փասթաթղթերը ներկայացնելու լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արգավանդի գյուղապետարան / հեռ. 0237-9-62-32/ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, ամեն օր ժամը 9^{00}-ից 18^{00}-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից /հեռ. 0131-2-07-07/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014թ. սեպտեմբերի 17-ը:
Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Արգավանդ 1-ին փողոց 39 շենք:
Հեռ. 0237-9-62-32
էլ.փոստ՝ argavandarmavir@mail.ru